Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի ($S_ճ$) հաշվարկման

մեթոդաբանություն և ճշգրտման ընթացակարգ
(կիրառելի է 15.09.2021թ.-ից**)**

Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի ($S_ճ$) հաշվարկման համար կիրառվող

ՓՈՓՈԽՈՒՆ ԲԱՂԱԴՐԻՉ ($S_փ$)

Արժույթ	($S_փ$)	Սահմանման/Փոփոխման ամսաթիվ	Ուժի մեջ է մինչև
ՀՀ դրամ	9.8	01.08.2023	31.07.2024թ.
ԱՄՆ դոլար	4.1	01.08.2023	31.07.2024թ.

Փոփոխուն բաղադրիչը ($S_փ$) հաշվարկվում է յուրաքանչյուր տարվա հուլիս ամսին, ընդ որում.

1. ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար.

- Որպես հիմնական ցուցանիշ՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից «մեկ տարուց ավելի» ժամկետով ՀՀ դրամով ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը;

  ՀՀ դրամով «մեկ տարուց ավելի» ժամկետով ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի «Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում՝

  https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx

- Որպես երկրորդային ցուցանիշ՝ 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը

  https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx

2. ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի համար.

- Որպես հիմնական ցուցանիշ՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից «մեկ տարուց ավելի» ժամկետով ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը

  ԱՄՆ դոլարով «մեկ տարուց ավելի» ժամկետով ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի «Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում՝

  https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx

- Որպես երկրորդային ցուցանիշ՝ մեկ տարի ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի միջին եկամտաբերությունը, որի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ սույն հղմամբ՝ https://fred.stlouisfed.org/series/DGS1

Փոփոխուն բաղադրիչը հաշվարկելիս կիրառվում են մաթեմատիկական կլորացման կանոնները՝ օրինակ, եթե 2.14% է, ապա դիտվում է 2.1%, իսկ 2.15% դիտվելու է 2.2%:

Այն դեպքում, երբ հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի և անհնարին է դառնում հաստատուն տոկոսադրույքի ճգրտումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հաստատուն տոկոսադրույքի ճգրտումը հաջորդ ժամանակաշրջանի համար սահմանվում է հիմք ընդունելով երկրորդային ցուցանիշը:

Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքը ենթակա է ճգրտման հետևյալ բանաձևով.

$S_ճ = S_հ + S_փ$ որտեղ՝

$S_ճ$ – Հաստատուն ճգրտված տոկոսադրույք,

$S_հ$ – Հաստատուն բաղադրիչ

$S_փ$ – Փոփոխուն բաղադրիչ,

Հաստատուն բաղադրիչի չափը (տոկոսը) սահմանվում է՝

1. ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար.

- Հիմնական ցուցանիշի կիրառման դեպքում՝ 5.5%

- երկրորդային ցուցանիշի կիրառման դեպքում՝ 7%

2. ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի համար.

- Հիմնական ցուցանիշի կիրառման դեպքում՝ 7%

- երկրորդային ցուցանիշի կիրառման դեպքում՝ 10%

Վարկի տոկոսադրույքը ճգրտվում է.

1. Առաջին անգամ տրամադրմանը հաջորդող 36-րդ ամսից անց առաջիկա ճշգրտման ամսաթվին (հոկտեմբեր ամսվա առաջին աշխատանքային օրը),
2. Առաջին ճշգրտումից հետո յուրաքանչյուր տարի ճշգրտման ամսաթվին, եթե հրապարակված փոփոխուն բաղադրիչը ($S_փ$) տարբերվում է վարկի տվյալ պահին գործող տոկոսադրույքի և հաստատուն բաղադրիչի տարբերությունից ավելի քան 0.4 տոկոսային կետով:

Վարկի հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի նվազագույն և առավելագույն շեմերը համապատասխանաբար սահմանվում են՝ Վարկի տրամադրման պահին սահմանված տոկոսադրույք ± 4%:

Կիրառելի է մինչև 15.09.2021թ.-ը կնքված վարկային պայմանագրերի համար

Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի ($S_ճ$) հաշվարկման մեթոդաբանություն և ճշգրտման ընթացակարգ

Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի ($S_ճ$) հաշվարկման համար կիրառվող

ՓՈՓՈԽՈՒՆ ԲԱՂԱԴՐԻՉ ($S_փ$)

Արժույթ	($S_փ$)	Սահմանման/Փոփոխման ամսաթիվ	Ուժի մեջ է մինչև
ԱՄՆ դոլար	2.2	01.08.2019	31.07.2020թ.
ԱՄՆ դոլար	0.4	01.08.2020	31.07.2021թ.
ԱՄՆ դոլար	0.2	01.08.2021	31.07.2022թ.
ԱՄՆ դոլար	2.9	01.08.2022	31.07.2023թ.
ԱՄՆ դոլար	5.8	01.08.2023	31.07.2024թ.

Փոփոխուն բաղադրիչը ($S_փ$) հաշվարկվում է յուրաքանչյուր տարվա հուլիս ամսին, ընդ որում.

1. որպես հիմնական ցուցանիշ հիմք է ընդունվում տվյալ ամսվան նախորդող ամսվա վերջին բանկային օրվա (Հայաստանի Հանրապետությունում և Լոնդոնում (Մեծ Բրիտանիա) միաժամանակ) ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը (ICE LIBOR USD 6 Month), կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:

   (ICE LIBOR USD 6 Month) տոկոսադրույքի տվյալների աղբյուր կարող է հանդիսանալ www.global-rates.com կայքում հրապարակված տեղեկատվությունը:

2. որպես երկրորդային ցուցանիշ հիմք է ընդունվում տվյալ ամսվան նախորդող ամսվա համար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված առևտրային բանկերի կողմից «մեկ տարուց ավելի» ժամկետով ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը ԱՄՆ դոլարի համար, կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:

   ԱՄՆ դոլարի համար «մեկ տարուց ավելի» ժամկետով ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի «Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում՝

https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx

Փոփոխուն բաղադրիչը հաշվարկելիս կիրառվում են մաթեմատիկական կլորացման կանոնները՝ օրինակ, եթե 2.14% է, ապա դիտվում է 2.1%, իսկ 2.15% դիտվելու է 2.2%:

Այն դեպքում, երբ հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի և անհնարին է դառնում հաստատուն տոկոսադրույքի ճգրտումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հաստատուն տոկոսադրույքի ճգրտումը հաջորդ ժամանակաշրջանի համար սահմանվում է հիմք ընդունելով երկրորդային ցուցանիշը:

Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքը ենթակա է ճգրտման հետևյալ բանաձևով.

$S_ճ = S_հ + S_փ$ որտեղ՝

$S_ճ$ – Հաստատուն ճգրտված տոկոսադրույք,

$S_հ$ – Հաստատուն բաղադրիչ

$S_փ$ – Փոփոխուն բաղադրիչ,

Հաստատուն բաղադրիչի չափը (տոկոսը) սահմանվում է 8%:

Վարկի տոկոսադրույքը ճգրտվում է.

1. Առաջին անգամ տրամադրմանը հաջորդող 36-րդ ամսից անց առաջիկա ճշգրտման ամսաթվին (հոկտեմբեր ամսվա առաջին աշխատանքային օրը),
2. Առաջին ճշգրտումից հետո յուրաքանչյուր տարի ճշգրտման ամսաթվին, եթե հրապարակված փոփոխուն բաղադրիչը ($S_փ$) տարբերվում է վարկի տվյալ պահին գործող տոկոսադրույքի և հաստատուն բաղադրիչի տարբերությունից ավելի քան 0.4 տոկոսային կետով:

Վարկի հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի նվազագույն և առավելագույն շեմերը համապատասխանաբար սահմանվում են՝ Վարկի տրամադրման պահին սահմանված տոկոսադրույք ± 4%: